

ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ՝ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԶԵՎԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՀՏԴ 342.4

DOI: 10.56246/18294480-2025.18-31

ՀԱԿՈՐՅԱՆ ՀՐԱՆՈՒՇ

իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Գավառի պետական համալսարանի և

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի դասախոս
էլփոստ՝ hranush.hranti@gmail.com

Հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետության պետական իշխանության ինստիտուտների սահմանադրական կարգավիճակին՝ կառավարման ձևի փոփոխության համարեքստում: Հեղինակը նշում է, որ պետության կառավարման ձևի, պետական իշխանության ճյուղերի բաժանման, դրանց միջև զսպումների ու հավասարակշռման, իշխանության մարմինների լիազորությունների հարաբերակցության և փոխադարձ վերահսկողության ապահովման հիմնահարցերը միշտ էլ եղել են գիտական ուսումնասիրության առարկա: Վերլուծելով պետության կառավարման երեք ձևերն էլ՝ արվում է այն եզրակացությունը, որ կառավարման ձևի փոփոխությունը էապես ազդում է պառլամենտի, կառավարության, Նախագահի փոխհարաբերությունների, լիազորությունների և պետական ինստիտուտների ձևավորման կառուցակարգերի վրա: Այն ազդում է նաև պառլամենտական մշակույթի, պառլամենտարիզմի զարգացման ընթացքի, պառլամենտի մեծամասնության և փոքրամասնության փոխհարաբերությունների վրա: Նշվում է, որ ՀՀ-ում կառավարման երեք ձևերն էլ իրենց ժամանակի համար ունեցել են և՛ առավելություններ, և՛ թերություններ: Մի կողմից առավել ընդունելի է համարվում կառավարման կիսապառլամենտական ձևը, քանի որ այս դեպքում զսպումների և հակակշիռների կառուցակարգերն առավել գործունե են, իսկ մյուս կողմից՝ հիմնավորվում է, որ

բարդ աշխարհաքաղաքական հանգույցում գտնվող պետության համար Նախագահի ուժեղ ինստիտուտի գոյությունն առավել օպերատիվություն է հաղորդում որոշումների կայացմանը և օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունների բնականոն գործունեության արդյունավետ ապահովմանը:

Կառավարման բոլոր ձևերի դեպքում էլ կարևոր է համարվում պետական իշխանության ինստիտուտների սահմանադրական կարգավիճակի հստակ սահմանումը, նրանց կողմից իրենց լիազորությունների և գործառույթների արդյունավետ իրականացումը, հասարակության ու պետության կայուն զարգացման ապահովումը:

Բանալի բառեր՝ կառավարման ձև, պետական իշխանության ինստիտուտ, սահմանադրական կարգավիճակ, զսպումների և հակակշիռների կառուցակարգեր:

Պետության կառավարման ձևի վերաբերյալ եղել են և կան տարբեր մոտեցումներ, կան նաև տարբեր գնահատականներ, թե ո՞ր ձևն է առավել ժողովրդավարական, որքանո՞վ է դա ազդում երկրում կայունության, իշխանության կանոնավոր գործունեության ապահովման վրա, կամ որքանո՞վ է արդյունավետ գործում իշխանությունների տարանջատման կառուցակարգը¹:

Տեսակետները տարբեր են, սակայն միանշանակ է այն, որ պետության կառավարման ձևն էապես անդրադառնում է սահմանադրական մարմինների ձևավորման կարգի, լիազորությունների, փոխհարաբերությունների, դրանց միջև գործող կառուցակարգերի, պետության ղեկավարի կարգավիճակի, ժողովրդավարական ինստիտուտների գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության և այլ առանցքային համակարգերի ու գործընթացների վրա:

Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական զարգացումները հիմք դարձան քաղաքացու և պետության փոխհարաբերությունների, պետական մարմինների ձևավորման կարգի և լիազորությունների, դրանց իրականացման կառուցակարգերի նորմատիվ իրավական ամրագրման համար՝ պայմանա-

¹. **Harris Peter, Ben Reilly** (eds.), *Democracy and Deep-Rooted Conflict: Options for Negotiators*. International Institute for Democracy and Electoral Assistance, Sweden; United Nations Development Program (UNDP), 1999; *Governing Systems and Executive-Legislative Relations (Presidential, Parliamentary and Hybrid Systems)*, Technical Series: Parliamentary Strengthening Reference Material; *Semi-presidentialism: Concepts, Consequences and Contesting Explanations*, by **Robert Elgie**, *Political Studies Review*, Vol. 2, Issue 3, p. 314, September 2004; **Trevor L., Brown and Charles R. Wise.**, *Constitutional Court and Legislative-Executive Relations: The Case of Ukraine*, *Political Science Quarterly*, Spring 2004.

վորված պետության կառավարման ձևով: Նախագահական, պառլամենտական և խառը՝ կիսանախագահական ու կիսապառլամենտական կառավարման ձևեր ունեցող երկրներում գոյություն ունի պետության ղեկավարի (գլխի) պաշտոնը: Որպես կանոն, սահմանադրորեն Նախագահին են վերապահվում հետևյալ կարևոր իրավասությունները՝ իշխանության բնականոն գործունեությունը ապահովելը, Սահմանադրության պահպանումը, սահմանադրական կարգի կայունությունը, պետությունը միջազգային հարաբերություններում ներկայացնելը, պետության համար կենսական այլ լիազորություններ իրականացնելը:

Պետության գլխի գործառույթները, սահմանադրորեն ամրագրված նրա լիազորությունները և դրանց արդյունավետ իրականացումն էականորեն ազդում են իշխանության ճյուղերի գործունեության վրա:

Մեր օրերում սահմանադրական միապետություններում թագավորի լիազորությունները խիստ սահմանափակ են, դրանք կրում են արարողակարգային և ներկայացուցչական բնույթ: Նման երկրներում (Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն, Իսպանիա, Նորվեգիա, Բելգիա, Նիդեռլանդներ) թագավորները հիմնականում երկիրը ներկայացնում են միջազգային հարաբերություններում, պետության խորհրդանիշն են, սակայն երկրի կառավարմանը գրեթե չեն մասնակցում: Նմանատիպ վիճակ է նաև պառլամենտական կառավարման ձև ունեցող պետություններում, որտեղ Նախագահի գործառույթները սահմանափակ են (Իտալիա, Լատվիա, ԳԴՀ, Հունաստան, Չեխիա, Ավստրիա, Հայաստանի Հանրապետություն և այլն):

Նախագահական հանրապետություններում իրավիճակը բոլորովին այլ է: Նախագահն օժտված է լայն լիազորություններով, ընտրվում է ժողովրդի կողմից, ունի առաջնային մանդատ և գործադիր իշխանության ղեկավարն է: Այդպիսի կառավարման ձև է գործում ԱՄՆ-ում, Լատինական Ամերիկայի գրեթե բոլոր երկրներում: Կիսանախագահական հանրապետություններում ևս Նախագահի ինստիտուտը ուժեղ է՝ իր զգալի լիազորություններով (Ֆրանսիա, Իտրվաթիա, Ռուսաստանի Դաշնություն): Այս դեպքում օրենսդիր իշխանության մարմինն իրականացնում է օրենսդիր և վերահսկողական գործառույթներ, իսկ կառավարությունն իրականացնում է պետության ներքին քաղաքականությունը և հաշվետու է թե՛ պառլամենտի, թե՛ Նախագահի առջև:

1990թ.-ին ժողովրդավարական ընտրություններով ընտրված և դեռևս խորհրդային իրականության մեջ գործող Գերագույն խորհուրդը ինքնակամ իրականացրեց իշխանության ճյուղերի լիազորությունների և գործառույթների բաժանում՝ ընդունելով մի շարք սահմանադրական օրենքներ պետական իշխանության ճյուղերի մասին, ինչպես նաև հիմնեց Նախագահի ինստիտուտը: 1995թ.-ին ՀՀ Սահմանադրության ընդունմամբ երկրում ներդրվեց

կիսանախագահական կառավարման համակարգ, որով էլ կանխորոշվեցին պետական իշխանության ճյուղերի գործառույթներն ու փոխհարաբերությունները: Համեմատելով Խորհրդային Հայաստանի և անկախ Հայաստանի Հանրապետության սահմանադրությունները՝ հանգում ենք հետևյալին.

1. Եթե Խորհրդային Հայաստանի Սահմանադրությունում ամրագրված էր, որ «ամբողջ իշխանությունը պատկանում է ժողովրդին», և այն իրականացվում է միայն ժողովրդական դեպուտատների խորհուրդների միջոցով, ապա 1995թ. ՀՀ Սահմանադրությունն ամրագրեց, որ իշխանությունը պատկանում է ժողովրդին, նա է իշխանության միակ աղբյուրն ու կրողը, և իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով,

2. Խորհրդային Հայաստանի Սահմանադրությամբ ամրագրված էր, որ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը ՀԽՍՀ պետական իշխանության բարձրագույն մարմինն է¹, իսկ ՀՀ Սահմանադրության համաձայն՝ պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի հիման վրա, այսինքն՝ իշխանության որևէ ճյուղ չունի առավելություն մյուսի նկատմամբ: Ազգային ժողովն իրականացնում է օրենսդիր և վերահսկողական գործառույթներ: Իշխանության ճյուղերը, լինելով միասնական, բաժանվում են իրենց գործառույթներով:

3. ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը մշտական գործող մարմին չէր և նիստեր գումարում էր տարեկան երկու անգամ՝ երեք օրով, իսկ ՀՀ Ազգային ժողովը մշտական գործող մարմին է: Պատգամավորները չեն կարող զբաղեցնել այլ պաշտոններ, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք՝ բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից (ՀՀ Սահմանադրություն հոդված 95):

4. Նախկինում Գերագույն խորհրդի նախագահությունը Գերագույն խորհրդի մշտական գործող մարմինն էր, որն իրականացնում էր ՀԽՍՀ պետական իշխանության բարձրագույն մարմնի գործառույթները նրա նստաշրջանների միջև ընկած ժամանակահատվածում: ՀՀ Սահմանադրությամբ նման մարմին նախատեսված չէր :

Այսպիսով, օգտվելով համեմատական վերլուծության մեթոդից և համադրելով սահմանադրությունները, պարզ է դառնում, որ գործ ունենք

¹ Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Սահմանադրություն, Երևան, 1978, էջ 39:

պետական տարբեր համակարգերի, մարմինների և դրանց զարգացման տարբեր ուղիների հետ:

ՀՀ Սահմանադրությունը, հռչակելով պետության անկախությունը, միաժամանակ ամրագրել է պետական իշխանության գործունեության հետևյալ սկզբունքները.

1. ինքնիշխանություն, այսինքն՝ հռչակվում է Հայաստանի Հանրապետության ներքին և արտաքին անկախությունը, գերակայությունը, լիիշխանությունը (հոդված 1-ին),
2. իշխանության պատկանելություն ժողովրդին (հոդված 2-րդ),
3. պետական իշխանության մարմինների ձևավորում ժողովրդավարական սկզբունքներով՝ ընտրության կամ նշանակման միջոցով, այսինքն՝ քաղաքացիների մասնակցություն պետական իշխանության ձևավորմանն ու գործունեությանը, ժողովրդաիշխանության հաստատում (հոդված 2-րդ),
4. մարդու՝ որպես բարձրագույն արժեքի հռչակում (հոդված 3-րդ),
5. իշխանության ճյուղերի բաժանում և հավասարակշռում (հոդված 4-րդ),
6. պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության օրինականություն (հոդված 6-րդ),
7. քաղաքացու իրավունքը՝ պետական իշխանության մարմինների գործունեությունը և որոշումները բողոքարկելու դատական կարգով,
8. իշխանությունների գործունեության թափանցիկություն և ժողովրդի առջև հաշվետու լինելու սկզբունք¹:

1995թ.-ին ընդունված ՀՀ Սահմանադրության 49-րդ և 55-րդ հոդվածների համաձայն՝ Հանրապետության Նախագահն առնչվում էր իշխանության բոլոր ճյուղերի հետ, հետևում Սահմանադրության պահպանմանը, ապահովում օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը:

Հանրապետության Նախագահը Հայաստանի Հանրապետության անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորն էր, պետությունը ներկայացնում էր միջազգային հարաբերություններում:

Նախագահը հանդիսանում էր գործադիր իշխանության ղեկավարը և երկրի արտաքին ու ներքին քաղաքականության պատասխանատուն էր: Նա էր նշանակում և ազատում վարչապետին, կարող էր առանց որևէ պայմանի արձակել Ազգային ժողովը և ձևավորել դատական իշխանություն: Նախագահին վերապահված էին լուրջ իշխանական լիազորություններ: ՀՀ նախագահը կիսանախագահական կառավարման ձևի պայմաններում կարող էր ոչ միայն միջամտել իշխանության ճյուղերի գործունեությանը, այլև «Ազգային ժողովի

¹. **Հակոբյան Հ. Հ.**, Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2007, էջ 50-51:

Նախագահի և վարչապետի հետ խորհրդակցելուց հետո կարող է արձակել Ազգային ժողովը և նշանակել արտահերթ ընտրություններ»։ Այսինքն՝ Նախագահը դարձյալ ազատ էր իր գործողություններում և առանց որևէ հիմքի կարող էր արձակել ժողովրդի կողմից ընտրված և առաջնային մանդատով օժտված Ազգային ժողովը։ Ազգային ժողովի լիազորությունները վաղաժամկետ կրճատելը, առանց որևէ հիմքի արձակելն անհավասարակշռություն էր ստեղծում իշխանության թևերի միջև։

Անգամ չանդրադառնալով Նախագահին վերապահված մյուս լիազորություններին՝ կարող ենք եզրակացնել, որ նա «տնօրինում» էր իշխանության թևերին և ցանկացած պարարագայում կարող էր անարգել դադարեցնել իշխանության օրենսդիր և գործադիր մարմինների գործունեությունը, ցանկացած պահի փոխել դատավորներին։ Այսպիսով, կիսանախագահական կառավարման ձևի բոլորովին այլ՝ ուրույն տարբերակ էր գործում երկրում, երբ պետական ինստիտուտներն ու նրանց գործունեությունը, ժողովրդավարության ապահովումը, իրավական պետության կայացումը գրեթե ամբողջությամբ կախված էին Նախագահի կամքից։

2005թ. սահմանադրական փոփոխությունների միջոցով որոշակիացվեց Նախագահի տեղը և դերը պետական իշխանության համակարգում, հոդված 49-ում հստակ սահմանվեց, որ Նախագահը պետության գլուխն է, և այս նորմը պահպանվեց նաև պառլամենտական կառավարման համակարգում։

Կիսապառլամենտական կառավարման ձևի պայմաններում սահմանափակվեցին Նախագահի լիազորությունները, որը կարևոր քայլ էր պառլամենտարիզմի զարգացման ճանապարհին։ Այդ լիազորությունները հիմնականում վերապահվեցին պառլամենտին։ Այսպիսով, փոխվեց կառավարման ձևը՝ կիսանախագահականից անցում կատարվեց կիսապառլամենտական ձևին, ինչով էլ պայմանավորված՝ որոշակիորեն փոխվեցին պետական իշխանության մարմինների ձևավորման կարգը, լիազորությունները, սահմանադրական պատասխանատվության հիմքերն ու ծավալները։

Ընդհանրապես հենց կառավարման ձևով են պայմանավորվում վարչապետի ընտրության կարգը, Կառավարության պատասխանատվության հարցերը։

Վենետիկի հանձնաժողովը, ուսումնասիրելով սահմանադրական փոփոխությունների նախագծերը, առաջարկել էր, որ նպատակահարմար կլինի, եթե Ազգային ժողովը նշանակի վարչապետին, իսկ կառավարությունը հաշվետու լինի և՛ Նախագահին, և՛ պառլամենտին։ Ռուսաստանի Դաշնությունում վարչապետի նշանակման այլ կարգ է գործում։ Նախագահը Պետական դումային առաջարկում է վարչապետի թեկնածությունը, որին պառլամենտը հավանություն

է տալիս, և այդ դեպքում ձևավորվում է կառավարությունը: «Այն երկրներում, որտեղ Նախագահը և պառլամենտն ունեն համատեղ լիազորություններ կառավարության ձևավորման ընթացքում, օրենսդիր և գործադիր իշխանություններից պահանջվում է բարձր աստիճանի փոխադարձ պատասխանատվություն, ինչպես, օրինակ, Ռուսաստանի Դաշնությունում, որտեղ Նախագահը նշանակում է վարչապետին Պետական դումայի համաձայնությամբ»¹: ԳԴՀ-ում, Սահմանադրության 63-րդ հոդվածի համաձայն, կանցլերի թեկնածությունն առաջարկում է Նախագահը, և եթե Բունդեսթագի պատգամավորների պարզ մեծամասությունը նրան հավանություն է տալիս, ապա Նախագահը նշանակում է կանցլերին²: Կառավարության ձևավորման և վարչապետի նշանակման գործընթացում կիսապառլամենտական կառավարման ձև ունեցող պետությունների սահմանադրավարական պրակտիկան ցույց է տալիս, որ ոչ միայն գնալով ավելանում է օրենսդիր մարմնի մասնակցությունը, այլև կարևորվում է այն, թե որքանով են այս երկու ինստիտուտները համաչափ համագործակցում, ինչպիսի ավանդույթներ են ձևավորում պառլամենտական ժողովրդավարության ոլորտում, ինչպիսի պառլամենտական մշակույթ է ներդրվում, որքանով են իշխանության ճյուղերը փոխզիջումների գնում՝ պետության կայունությունը պահպանելու համար, և որքանով են նպաստում ժողովրդավարության ու պառլամենտարիզմի խորացմանն ու զարգացմանը: Մեր կարծիքով՝ երկրում կտիրի համերաշխության ու փոխադարձ հարգանքի մթնոլորտ, և առաջընթաց կապահովվի, եթե պետական ինստիտուտները մնան իրենց լիազորությունների շրջանակներում, իշխանության ճյուղերը գործեն ներդաշնակ, սահմանադրորեն իրենց վերապահված գործառույթներին համապատասխան:

2005թ. սահմանադրական փոփոխությունների շնորհիվ բացառվեց առանց որևէ պայմանի Ազգային ժողովն արձակելու՝ ՀՀ Նախագահի լիազորությունը: Ամրագրվեցին այն հիմքերը, որոնց դեպքում միայն Նախագահը կարող էր արձակել Ազգային ժողովը: Հոդված 55-ի կետ 3-ում սահմանվում էր, որ Ազգային ժողովի կամ վարչապետի առաջարկությամբ Նախագահը կարող էր որոշակի պայմանների դեպքում միայն արձակել Ազգային ժողովը և նշանակել արտահերթ ընտրություններ՝ կիրառելով սահմանադրական սանկցիա, եթե.

- երկու անգամ անընդմեջ երկու ամսվա ընթացքում հավանություն չի տալիս կառավարության ծրագրին, (հոդվածներ 55-ի 3-րդ կետ, 74.1-րդ),

¹. Окуньков Л. А., Президент Российской Федерации. Конституция и политическая практика, М., 1996, с. 54.

². Конрад Х., Основы конституционного право ФРГ, М., 1981.

- հերթական նստաշրջանի երեք ամիսների ընթացքում որոշում չի կայացնում կառավարության որոշմամբ անհետաձգելի համարվող օրենքի նախագծի վերաբերյալ,
- հերթական նստաշրջանի ընթացքում նիստեր երեք ամսից ավելի չեն գումարվում,
- հերթական նստաշրջանի ընթացքում Ազգային ժողովը երեք ամսից ավելի իր քննարկած հարցերի վերաբերյալ որոշում չի ընդունում:

Ազգային ժողովի արձակումը Նախագահին վերապահված խիստ սանկցիաներից է: Սահմանադրական պատասխանատվության այս կառուցակարգը այլ երկրներում կոչվում է ներկայացուցչական մարմնի լուծարում, արձակում, լիազորությունների վաղաժամկետ դադարեցում կամ լիազորությունների ժամկետների կրճատում:

Այսպիսով, Նախագահն ուներ պառլամենտն արձակելու և նոր ընտրություններ նշանակելու իրավունք որոշակի պայմանների առկայության դեպքում:

Լեհաստանի Սահմանադրության 155-րդ հոդվածի համաձայն՝ Նախագահն իրավունք ունի կրճատել Սեյմի լիազորությունների ժամկետը¹: «Կարելի է նշել պայմանների երեք տարբերակ, որոնց միջոցով կիսապառլամենտական և կիսանախագահական հանրապետություններում Նախագահն իրազործում է պառլամենտի ստորին պալատի արձակման իր իրավունքը: Առաջին՝ նա կարող է պառլամենտն արձակել, երբ վերջինս անվստահություն է հայտնում կառավարությանը, երկրորդ՝ պետության գլուխն օժտվում է այդ իրավունքով, եթե քվեարկության մի քանի փուլերից հետո կառավարության ղեկավարի՝ նրա թեկնածուն հաստատվելու համար չի ստանում պառլամենտականների ձայների անհրաժեշտ մեծամասնությունը, և երրորդ՝ եթե երկրի քաղաքական իրավիճակը փակուղային է կամ օրենսդիր ու գործադիր իշխանությունների հարաբերությունները ճգնաժամային են»²: Կան նաև երկպալատանի պառլամենտ ունեցող երկրներ, որտեղ Նախագահին իրավունք է վերապահված միաժամանակ արձակելու երկու պալատն էլ: Այսպես, Իտալիայի Սահմանադրության 88-րդ հոդվածի համաձայն՝ Նախագահը լսում է պալատների նախագահներին և կարող է միաժամանակ երկու պալատը կամ պալատներից մեկն արձակել: ՀՀ Սահմանադրության մեջ մի քանի անգամ օգտագործվել է «արձակում» եզրույթը (հոդվածներ 55.3, 63, 67, իսկ 2005թ. փոփոխություններում՝ հոդվածներ 74.1, 117.4): Միաժամանակ Սահմանադրությամբ նախատեսված էր մի քանի դեպք, որոնց համաձայն Նախագահը Ազգային ժողովն արձակել չէր կարող: Այսպես.

¹. Конституции государств Центральной и Восточной Европы, М., 1997, с. 237.

². Сахаров Н. А., Институт Президентства в современном мире, М., 1994, с. 126.

«Նորընտիր Ազգային ժողովը չի կարող արձակվել ընտրություններից հետո մեկ տարվա ընթացքում» (1995թ. Սահմանադրության հոդված 63-ի 4-րդ պարբերություն): Նման նորմ գործում է նաև Հունաստանում, Ռուսաստանում, Ֆրանսիայում: Ազգային ժողովը չի կարող արձակվել ռազմական դրության ժամանակ (հոդված 63): Այսպիսի նորմ նախատեսված է Լեհաստանի, Ֆրանսիայի սահմանադրություններում: Արգելվում էր Ազգային ժողովն արձակել, եթե Նախագահի պաշտոնանկության հարց է բարձրացվել: Այսպիսի սկզբունքներ կան Իտալիայի, Պորտուգալիայի, Լիտվայի, Բելառուսի, Ռուսաստանի Դաշնության սահմանադրություններում:

Այսպիսով, եվրոպական շատ երկրներում Նախագահն առանց հիմքի չի կարող արձակել պառլամենտը: Հարկ է նշել, որ 2005թ. ՀՀ սահմանադրական բարեփոխումներով լիազորությունների վերաբաշխում տեղի ունեցավ Ազգային ժողովի, կառավարության և Նախագահի միջև, որոշակիորեն բարելավվեց իշխանության թևերի հավասարակշռված գործունեությունը: Այդուհանդերձ, առկա էր իշխանության կենտրոնացում Նախագահի ձեռքում: Տեղին է հիշել Գ. Հարությունյանի այն պնդումը, որ «Բավարար հստակեցված չէ նախագահական ինստիտուտի տեղը պետական իշխանության համակարգում, երկրորդ՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները՝ բերված բոլոր չափանիշների տեսանկյունից անհրաժեշտ գործառնական անկախություն ու դինամիկ հավասարակշռված վիճակ չունեն, երրորդ՝ խախտված հավասարակշռության բացահայտման, գնահատման ու վերականգման կառուցակարգերը անկատար են»¹:

Մեր կարծիքով՝ այդ փոփոխությունները նպաստեցին իշխանական թևերի հարաբերական անկախությանը՝ պետության կառավարման ձևին համապատասխան կարևորելով պառլամենտի դերակատարությունը, սակայն ամբողջապես չլուծեցին սահմանադրական ինստիտուտների լիազորությունների ամբողջության ու համարժեքության ապահովման հարցը: Ինչպես նշում է Բ. Օսիպյանը, «...նույնիսկ «ամենակոշտ» Սահմանադրությունը պետք է ներառի գործնական հնարավորություն՝ պարբերաբար իրականացնելու օրենսդրական բարեփոխումներ՝ խուսափելու համար սոցիալական տարաբնույթ ցնցումներից»²:

Իրավակիրառ պրակտիկան ցույց տվեց, որ կիսապառլամենտական համակարգում իշխանության ճյուղերի լիազորությունների և Նախագահի գործառույթների միջև կան չլուծված հարցեր, խոչընդոտներ: Ուշադրության էր արժանի այն հանգամանքը, որ եթե Ազգային ժողովի մեծամասնությունը

1. Հարությունյան Գ. Գ., Սահմանադրությունից՝ սահմանադրականություն, Երևան, «Նժար», 2004, էջ 48:

2. Осипян Б. А., Идея саморазвивающийся правовой системы // Журнал российского права, 2004, N 4, с. 73.

Նախագահի կուսակցությունից էր, ապա իշխանությունը դարձյալ գերկենտրոնանում էր Նախագահի ձեռքում: Բարդություն էր առաջանում նաև այն դեպքում, երբ Նախագահը պառլամենտում չուներ մեծամասնություն, և առաջանում էին լուրջ հակասություններ պառլամենտի և Նախագահի միջև, որը կարող էր դառնալ խոչընդոտ պետության զարգացման գործում: Նախագահը, ընտրված լինելով ժողովրդի կողմից, չէր կարող իր լիազորություններն իրականացնել՝ առանց հաշվի առնելու պառլամենտական մեծամասնության կարծիքը: Հարց է առաջանում՝ այս դեպքում ու՞մ քաղաքական ծրագիրը պետք է իրականացնել, ինչպե՞ս վարել արտաքին քաղաքականությունը և ապահովել պետության ներքին անվտանգության ու պաշտպանության հարցերը: Նախագահը զգալիորեն ուժեղանում է, երբ իր կուսակցությունը պառլամենտում ունենում է մեծամասնություն:

Սահմանադրական բարեփոխումների շնորհիվ 2015թ.-ին երկիրն անցում կատարեց պառլամենտական կառավարման ձևին, և վարչապետի նշանակման հարցում այլևս որևէ դերակատարություն չունեցավ Հանրապետության նախագահը, ով ընտրվում է պառլամենտի կողմից: Նախագահն անհապաղ վարչապետ է նշանակում Սահմանադրության 149-րդ հոդվածով սահմանված կարգով պառլամենտական մեծամասնության ներկայացրած թեկնածուին կամ պառլամենտի կողմից ընտրված անձին: Նախագահի մասնակցությունը վարչապետի նշանակման գործում զուտ արարողակարգային է: Անժխտելի է, որ պետության մեջ կայունության պահպանման, ժողովրդավարության խորացման, ժողովրդավարական ավանդույթների արմատավորման, պառլամենտարիզմի զարգացման գրավականը իշխանության ճյուղերի բնականոն գործունեությունն է, նրանց կողմից իրենց լիազորությունների հստակ կատարումը, պառլամենտի կողմից գործադիր իշխանության նկատմամբ արդյունավետ վերահսկողությունը, Սահմանադրության և օրենքների հիման վրա գործելը:

Պառլամենտական կառավարման ձևում Նախագահը հիմնականում չի մասնակցում կառավարմանը և չի կարող արձակել պառլամենտը: Չեփիայի Հանրապետությունում (Սահմանադրության հոդված 35) Պատգամավորների պալատը լուծարվում է, եթե վստահություն չի հայտնել նոր նշանակված կառավարությանը և Նախագահի կողմից առաջարկված վարչապետի թեկնածուին: Էստոնիայում պառլամենտի արձակման մի քանի դեպք է նախատեսված. եթե կառավարության կազմը սահմանված կարգով չի ներկայացվում երկրի նախագահին, պետական բյուջեն չընդունելու դեպքում (հոդված 119), եթե հանրաքվեի դրված օրենքի նախագիծը չի ստանում ձայների մեծամասնություն (հոդված 105), իսկ Խորվաթիայում, Սահմանադրության 104-րդ հոդվածի համաձայն, կառավարության առաջարկով կուսակցական խմբակցությունների հետ խորհրդակցելուց հետո միայն Նախագահը կարող է արձակել պառլամենտը,

եթե վերջինս անվստահություն է հայտնել կառավարությանը կամ 120 օրվա ընթացքում չի հաստատել պետական բյուջեն¹:

Լեհաստանում պառլամենտը կարող է անվստահություն հայտնել նախարարին (հոդված 159)²: Իսկ Հունգարիայի Սահմանադրության 28-րդ հոդվածի համաձայն՝ Նախագահը կարող է արձակել պառլամենտը, եթե մեկ տարվա ընթացքում ոչ պակաս, քան չորս անգամ անվստահություն է հայտնում կառավարությանը կամ եթե վերջինիս լիազորություններն ավարտվել են, և նոր վարչապետի թեկնածությունը չի ընդունվել պառլամենտի կողմից 40 օրվա ընթացքում³: Ռուսաստանի Դաշնությունում Նախագահը կարող է արձակել Պետական դուման, եթե այն երեք անգամ մերժում է վարչապետի թեկնածությունը⁴: Լատվիայի Սահմանադրության 48-րդ հոդվածի համաձայն՝ Նախագահին իրավունք է վերապահված արձակել Սեյմը և անցկացնել համաժողովրդական հանրաքվե, որի արդյունքներից ելնելով էլ վերջնական որոշվում է օրենսդիր մարմնի արձակման հարցը⁵: Լիխտենշտեյնում նույնպես հանրաքվեով է որոշվում ներկայացուցչական մարմնի արձակման հարցը (Սահմանադրության հոդված 48)⁶: Կարծում ենք՝ այս կառուցակարգն առավել ժողովրդավարական է, քանի որ ժողովրդի կողմից ընտրված մարմնի ճակատագիրը որոշում է հենց ժողովուրդը: Հետաքրքիր կառուցակարգ է գործում Մակեդոնիայում, որտեղ օրենսդիր մարմինն արձակվում է ինքնալուծարման կարգով, եթե պառլամենտի անդամների կեսից ավելին քվեարկում են արձակման օգտին (Սահմանադրության հոդված 63)⁷:

Հայաստանում՝ որպես գործող Սահմանադրությամբ պառլամենտական կառավարման ձև ընդունած երկիր, Նախագահն այլևս որևէ կապ չունի պառլամենտի արձակման հետ: Դրա փոխարեն սահմանադրորեն ամրագրված են դեպքեր, երբ Ազգային ժողովն արձակվում է իրավունքի ուժով:

1.Եթե Ազգային ժողովը հավանություն չի տալիս կառավարության ծրագրին և Սահմանադրության 149-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերին համապատասխան չի ընտրում նոր վարչապետ,

¹. http://www.constitution.garant.ru/DOC_3864911.htm#sub_para_N_104

². Конституции государств Центральной и Восточной Европы, М., 1997, с. 494, 564, 558, 220, 237, 238.

³. Конституции государств Центральной и Восточной Европы, М., 1997, с. 107.

⁴. Конституции стран-членов СНГ, Ереван, 1997, с. 39. Конституции стран-членов СНГ, Ереван, 1997, с. 39.

⁵. Конституция Латвийской Республики // Новые конституции стран СНГ и Балтии, Сборник документов, М., 1998.

⁶. Конституция Княжества Лихтенштейн // Bayensche julius-Mayimi Lians-Univestaet Wuerrburg, 2000.

⁷. Конституция Республики Македонии // Конституции государств Европы, М., 2001.

2. Եթե Ազգային ժողովն ընտրում է վարչապետին, սակայն կրկին հավանություն չի տալիս կառավարության ծրագրին:

1995թ.-ից մինչ 2005թ. Նախագահի լիազորությունները տարածվում էին անգամ իշխանության առանձին ճյուղ հանդիսացող օրենսդիր մարմնի աշխատանքների կազմակերպման վրա՝ նա կարող էր գումարել Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կամ կառավարության առաջարկությամբ (հոդված 70-րդ):

1995թ. Սահմանադրությամբ Նախագահը մասնակցում էր նաև դատական իշխանության ձևավորմանը: Նախագահը գլխավորում էր Արդարադատության խորհուրդը, նշանակում և հետ էր կանչում դատավորներին (թեկնածուների ցանկը իրեն առաջարկում էին): Միաժամանակ Նախագահը նշանակում էր Սահմանադրական դատարանի (ՍԴ) չորս անդամներին, Ազգային ժողովի կողմից սահմանված ժամկետում ՍԴ նախագահ չնշանակվելու դեպքում՝ ՍԴ նախագահին: Նրա լիազորությունների մեջ էր մտնում գլխավոր դատախազի, տեղակալների, դատախազության կառուցվածքային ստորաբաժանումները գլխավորող դատախազների նշանակումը:

2005թ. սահմանադրական փոփոխություններից հետո դատական իշխանության ոլորտում ևս սահմանափակվեցին Նախագահի լիազորությունները, այլևս նա Արդարադատության խորհրդի նախագահը չէր (նիստերը վարում էր վճռաբեկ դատարանի նախագահը), գլխավոր դատախազին նշանակում և ազատում էր Ազգային ժողովը՝ Նախագահի առաջարկությամբ:

Իսկ գործող Սահմանադրությամբ Նախագահի գործառույթը դատավորներին նշանակելիս՝ ձևական, արարողակարգային բնույթ է կրում: Ըստ Սահմանադրության 166-րդ հոդվածի՝

1. Սահմանադրական դատարանի դատավորներին ընտրում է Ազգային ժողովը՝ տասներկու տարի ժամկետով: Սահմանադրական դատարանը կազմված է ինը դատավորից, որոնցից երեքն ընտրվում են Հանրապետության նախագահի, երեքը՝ կառավարության, երեքը՝ դատավորների ընդհանուր ժողովի առաջարկությամբ:

2. Սահմանադրական դատարանն իր կազմից՝ վեց տարի ժամկետով, ընտրում է Սահմանադրական դատարանի նախագահ և փոխնախագահ՝ առանց վերընտրվելու իրավունքի:

3. Վճռաբեկ դատարանի դատավորներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Ազգային ժողովում ընտրված դատավորի թեկնածուին:

4. Վճռաբեկ դատարանի պալատների նախագահներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ համապատասխան պալատի կազմից վեց տարի ժամկետով:

5. Վճռաբեկ դատարանի նախագահին ընտրում է Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ վճռաբեկ դատարանի կազմից վեց տարի ժամկետով:

6. Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ:

7. Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նախագահներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ համապատասխան դատարանի կազմից երեք տարի ժամկետով¹:

Այսպիսով, ՀՀ-ում պառլամենտական կառավարման ձևի պայմաններում դատական իշխանության ձևավորումը հիմնականում իրականացնում է պառլամենտը:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ կառավարման պառլամենտական ձևին անցնելով՝ Նախագահի լիազորությունների հիմնական մասը բաշխվել է Ազգային ժողովի, կառավարության ու վարչապետի միջև:

Ինչպես վերը նշել ենք, մինչև 2015թ. սահմանադրական փոփոխությունները Նախագահին ընտրվում էր անմիջականորեն ժողովրդի կողմից, ուներ առաջնային մանդատ և իրավագոր էր ներկայացնելու ժողովրդի կամքը, նա էր լիազորված ապահովելու իշխանության ճյուղերի բնականոն գործունեությունը: Առաջնային մանդատով էր օժտված նաև Ազգային ժողովը, որն իրականացնում էր սահմանադրորեն իրեն վերապահված գործառույթները՝ ընդունում էր օրենքներ, որոշումներ, ուղերձներ, հայտարարություններ: Ազգային ժողովը միակն է պետական իշխանության ճյուղերի մեջ, որը զբաղվում է օրինաստեղծ գործունեությամբ: Ազգային ժողովն է հաստատում պետական բյուջեն և վերահսկողություն իրականացնում դրա կատարման նկատմամբ: Լինելով ներկայացուցչական մարմին՝ գործադիր իշխանության նկատմամբ տարբեր կառուցակարգերի (հարցեր, հարցապնդումներ, կառավարության ծրագրի հաստատում, ժամանակավոր, 2015թ.-ից հետո՝ նաև քննիչ հանձնաժողովների կազմում, Վերահսկիչ պալատի, այնուհետև՝ Հաշվեքննիչ պալատի նախագահին և անդամներին, այլ պաշտոնատար անձանց ընտրում, նշանակում և այլն) օգնությամբ իրականացնում է վերահսկողություն: Պառլամենտն է Նախագահի առաջարկությամբ հայտարարում համաներում, հաստատում, կասեցնում կամ չեղյալ հայտարարում միջազգային պայմանագրերը, կառավարության առաջարկով

¹. ՀՀ Սահմանադրություն, 2015թ. փոփոխություններով // <https://www.arlis.am/documentview.aspx?docID=143723>

սահմանում ՀՀ վարչատարածքային բաժանումը: Համապատասխան հիմքերի առկայության դեպքում (պետական դավաճանություն, ծանր հանցագործություն, 2015թ.-ից հետո՝ Սահմանադրության կոպիտ խախտում) Ազգային ժողովը կարող է պաշտոնանկ անել ՀՀ Նախագահին, անվստահություն հայտնել կառավարությանը և իրականացնել այլ գործառույթներ:

Այլ է կառավարության դերակատարությունը: Կառավարման բոլոր ձևերում էլ այն զբաղվում է երկրի ներքին քաղաքականությամբ: 2005թ. բարեփոխումների արդյունքում կառավարությունն անկախացավ Նախագահից, սակայն պաշտպանության և արտաքին քաղաքականությունը մշակում և իրականացնում էր Հանրապետության Նախագահի հետ, քանի որ համաձայն Սահմանադրության՝ Նախագահն էր զինված ուժերի գերագույն գլխավոր հրամատարը:

Գործող Սահմանադրության համաձայն՝ կառավարությունը մշակում և Ազգային ժողովի հավանությանն է ներկայացնում իր գործունեության ծրագիրը, կառավարում է պետական սեփականությունը: Նա է իրականացնում տարածքային զարգացման, սոցիալ-տնտեսական, ֆինանսա-վարկային, հարկային, մաքսային, մշակութային և այլ ոլորտների պետական քաղաքականությունը, ապահովում է հասարակական կարգի պաշտպանությունը, ձեռնարկում է միջոցներ օրինականության պահպանման, քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները, պետության պաշտպանությունը, ազգային անվտանգությունն ապահովելու և արտաքին քաղաքականությունն իրականացնելու ուղղությամբ:

Սահմանադրորեն ամրագրվեց, որ արդարադատություն իրականացնում են դատարանները, իսկ սահմանադրական արդարադատությունը՝ Սահմանադրական դատարանը: Համակարծիք ենք պրոֆեսոր Գագիկ Հարությունյանի հետ, որ Սահմանադրության նորմ-սկզբունքների հետևողական իրացման ճանապարհով երկրում սահմանադրականության երաշխավորումն առանձնահատուկ կարևորություն ունի հատկապես նորանկախ երկրներում¹: Ամենաընդհանուր ձևերով իրավական պետության հիմնական սկզբունքի պահանջն է, որ պետական իշխանությունը պետք է սահմանափակված լինի, ճշգրտված լինի այն սահմանը, որից այն կողմ իշխանությունն անցնել չի կարող²:

¹. Հարությունյան Գ. Գ., Սահմանադրական մշակույթ. Պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, Երևան, «Նժար», 2005, էջ 170:

². Сущинская С. И., Понятие и сущность правового государства и соответствие ФРГ критериям правового государства с точки зрения ее конституционных характеристик // Конституционное право зарубежных стран, 2001, N 1, с. 42-48; Станских С. Н., Парламентская Ассамблея Совета Европы о принципе разделения властей в 21 веке // Конституционное и муниципальное право, 2005, N 1, с. 47-48.

Արդեն գործող Սահմանադրության մեջ Հանրապետության նախագահը որևէ լիազորություն չունի կառավարության գործունեությանը միջամտելու, ներքին և արտաքին քաղաքականության, պաշտպանության և ազգային անվտանգության վրա ազդեցություն ունենալու ուղղությամբ: Այդ իրավասությունները, ի թիվս վերը նշված գործառույթների, սահմանադրորեն ամբողջությամբ վերապահված է կառավարությանը: Նա ունի արարողակարգային և ներկայացուցչական գործառույթներ, չունի առաջնային մանդատ, ընտրվում է Ազգային ժողովի կողմից՝ 7 տարի ժամկետով: Ամենակարևորը՝ հետևում է Սահմանադրության պահպանմանը, սակայն Սահմանադրությունը չի նախատեսում, թե ինչ կառուցակարգերով է Նախագահն ապահովելու Սահմանադրության պահպանումը:

Ինչ վերաբերում է պառլամենտին, ապա այն

- դարձել է պետական իշխանության միակ մարմինը, որն ընտրվում է ժողովրդի կողմից, և ինքն է հիմնականում ձևավորում պետական իշխանության մյուս ճյուղերը, վերահսկում գործադիր իշխանությանը, անվտանգություն հայտնում վարչապետին,
- քաղաքական գլխավոր հարթակն է՝ մեծամասնության և ընդդիմության գործունեության համար,
- ավելացել են պառլամենտական փոքրամասնության իրավունքները՝ պառլամենտական պաշտոններ ունենալու (Ազգային ժողովի նախագահի տեղակալ, հանձնաժողովի նախագահներ, տեղակալներ), պաշտոններում ընտրելու և նշանակումներ (<< գլխավոր դատախազ, Հաշվեքննիչ պալատ, ԿԸՀ, ՄԻՊ, Կենտրոնական բանկ, դատական իշխանության ներկայացուցիչներ և այլն) կատարելու, օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու, քննիչ հանձնաժողով ստեղծելու և այլ հարցերում,
- ունի վերահսկողական լուրջ կառուցակարգեր գործադիր իշխանության նկատմամբ (կառավարության ծրագրի հաստատում, բյուջեի հաստատում և վերահսկողություն բյուջեի կատարման նկատմամբ, հարցապնդումներ, պաշտոններում նշանակում, Հաշվեքննիչ պալատի, քննիչ հանձնաժողովի ձևավորում՝ հոդվածներ 107, 108, 111, 112, 113, 115, 157 և այլն),
- երկրում չկա որևէ մարմին, որը հսկողությունից դուրս է գտնվում: Կառավարությունը, վարչապետը հաշվետու են պառլամենտի առջև և փոխարինելի են (հոդվածներ 109, 149, 151, 156),
- բացակայում է ինստիտուտների միջև հակասությունը, սակայն «պայքարը» հիմնականում ընթանում է պառլամենտական մեծամասնության և փոքրամասնության միջև,

- պառլամենտական կառավարման ձևի կարևոր առանձնահատկությունն է բազմանձնյա (կոլեգիալ) կառավարումը,
- գործադիր իշխանությունը միասնական է, և դրա պատասխանատվությունը կրում է միայն կառավարությունը, իհարկե, Ազգային ժողովի վերահսկողության ներքո,
- Նախագահը գործնականում չի մասնակցում վարչապետի ընտրության և կառավարության ձևավորման գործընթացներին,
- վարչապետն ունի կիսապառլամենտական համակարգում Նախագահին վերապահված շատ լիազորություններ, սակայն ի տարբերություն կառավարման նախկին ձևի՝ այժմ վարչապետը հաշվետու է պառլամենտի առջև, և պառլամենտը կարող է նրան անվստահություն հայտնել,
- պառլամենտը սահմանված կարգով կարող է պաշտոնանկ անել Նախագահին, ընդունել նրա հրաժարականը և այլն:

Վերլուծելով կառավարման երեք ձևերն էլ՝ ակնհայտ է դառնում, որ կառավարման ձևի փոփոխությունը էապես ազդում է պառլամենտի, կառավարության, Նախագահի փոխհարաբերությունների, լիազորությունների և պետական ինստիտուտների ձևավորման կառուցակարգերի վրա: Այն ազդում է նաև պառլամենտական մշակույթի, պառլամենտարիզմի զարգացման ընթացքի, պառլամենտի մեծամասնության և փոքրամասնության փոխհարաբերությունների վրա: Կիսանախագահական ձևում Սահմանադրությամբ ամրագրված էր պետական իշխանության նախագահակենտրոն մոդելը, Նախագահն ուներ ընդարձակ լիազորություններ, և իշխանության ճյուղերը՝ սահմանադրական մարմինները կախման մեջ էին պետության ղեկավարից:

Պառլամենտում մեծամասնության բացակայությունը հղի է կոալիցիայի փլուզման վտանգով և երերուն կառավարության գոյությամբ:

Խառը կառավարման ձևում Նախագահը հաշվետու չէր որևէ մարմնի առջև, բացակայում էր որևէ կառուցակարգ՝ Նախագահին վերահսկելու համար: Գործող իրավակարգավորումներն այնպիսին էին, որ եթե Նախագահը նույնիսկ անգործության մատնվեր, չէր կրում սահմանադրական պատասխանատվություն: Նշել ենք նաև, որ նախագահական ընտրությունների ընթացքում հասարակությունը ճեղքվում էր երկու մասի, և մեծանում էր առճակատման վտանգը:

Այսպիսով,

1. ՀՀ-ում կառավարման երեք ձևերն էլ իրենց ժամանակի համար ունեցել են և՛ առավելություններ, և՛ թերություններ: Այդուամենայնիվ, մենք գտնում ենք, որ կիսապառլամենտական ձևն առավել նախընտրելի է, քանի որ զսպումների և հակակշիռների կառուցակարգերն

առավել գործուն էին: Մյուս կողմից էլ բարդ աշխարհաքաղաքական հանգույցում գտնվող պետության համար Նախագահի ուժեղ ինստիտուտի գոյությունն առավել օպերատիվություն է հաղորդում որոշումների կայացմանը և օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունների բնականոն գործունեության արդյունավետ ապահովմանը:

2. Պետական իշխանության ճյուղերի բաժանման և հավասարակշռման կառուցակարգերը մեխանիկորեն չեն կիրառվում, դրանք փոխկապակցված են և զարգանում ու փոփոխվում են՝ կառավարման ձևով պայմանավորված:
3. Պետական իշխանության ճյուղերում և կառավարման մարմիններում սահմանադրական պաշտոնների նշանակումներն էականորեն տարբերվում են, տարբերվում են նաև դրանց փոխհարաբերությունները:
4. Արմատապես տարբերվում են պետության գլխի լիազորությունները՝ գերկենտրոնացումից նվազելով մինչև արարողակարգային և ներկայացուցչական լիազորություններ,
5. Փոխվում են Կառավարության ձևավորման և հաշվետվողականության կարգն ու կառուցակարգերը, ինչպես նաև վարչապետի կարգավիճակը:

Սակայն հարկ ենք համարում փաստել, որ պառլամենտական կառավարման ձևում՝

ա) Նախագահի ինստիտուտը շատ թույլ է, սակավ լիազորություններով,

բ) վարչապետի լիազորությունները չափազանց լայն են, որոնք անխոչընդոտ կիրառվում են հատկապես պառլամենտական մեծամասնություն ունենալու դեպքում,

գ) դատական իշխանության մարմիններ ձևավորելիս առաջանում են դատավորներին ժամանակին չընտրելու դեպքեր, որը բացասական է անդրադառնում իշխանության անկախ ճյուղի գործունեության վրա,

դ) պառլամենտական վերահսկողական լիազորությունների ավելացմանը զուգահեռ, այնուամենայնիվ, հստակեցման կարիք ունի Սահմանադրության 108-րդ հոդվածը՝ քննիչ հանձնաժողովների ձևավորման կարգի հետ կապված:

Կարծում ենք, որ այս հարցերն իրենց համապատասխան լուծումները կստանան սահմանադրական հետագա բարեփոխումների ընթացքում:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն, 2015թ. փոփոխություններով, Երևան, 2015:
2. Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Սահմանադրություն, Երևան, 1978:
3. Конституции государств Центральной и Восточной Европы, М., 1997.
4. Конституции стран-членов СНГ, Ереван, 1997.
5. Конституция Латвийской Республики // Новые конституции стран СНГ и Балтии, Сборник документов, М., 1998.
6. Конституция Княжества Лихтенштейн // Bayensche julius-Mayimi Lians-Univestaet Wuerrburg, 2000.
7. Конституция Республики Македонии // Конституции государств Европы, М., 2001.
8. Հակոբյան Հ. Հ., Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, «Տիգրան Մեծ», 2007:
9. Հարությունյան Գ. Գ., Սահմանադրությունից՝ սահմանադրականություն, Երևան «Նժար», 2004:
10. Հարությունյան Գ. Գ., Սահմանադրական մշակույթ. Պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, Երևան «Նժար», 2005:
11. Конрад Х., Основы конституционного право ФРГ, М., 1981.
12. Окуньков Л. А., Президент Российской Федерации. Конституция и политическая практика, М., 1996.
13. Осипян Б. А., Идея саморазвивающийся правовой системы // Журнал российского права, N 4, 2004.
14. Сахаров Н. А., Институт Президентства в современном мире, М., 1994.
15. Станских С. Н., Парламентская Ассамблея Совета Европы о принципе разделения властей в 21 веке // Конституционное и муниципальное право, N 1, 2005.
16. Сущинская С. И., Понятие и сущность правового государства и соответствие ФРГ критериям правового государства с точки зрения ее конституционных характеристик // Конституционное право зарубежных стран, N 1, 2001.
17. Governing Systems and Executive-Legislative Relations (Presidential, Parliamentary and Hybrid Systems), Technical Series: Parliamentary Strengthening Reference Material; Semi-presidentialism: Concepts, Consequences and Contesting Explanations, by **Robert Elgie**, Political Studies Review, Vol. 2, Issue 3, p. 314, September 2004.

18. **Harris Peter, Ben Reilly** (eds.), *Democracy and Deep-Rooted Conflict: Options for Negotiators*. International Institute for Democracy and Electoral Assistance, Sweden; United Nations Development Program (UNDP), 1999.
19. **Trevor L., Brown and Charles R. Wise.**, *Constitutional Court and Legislative-Executive Relations: The Case of Ukraine*, Political Science Quarterly, Spring 2004.
20. http://www.constitution.garant.ru/DOC_3864911.htm#sub

THE CONSTITUTIONAL STATUS OF STATE POWER INSTITUTIONS IN THE REPUBLIC OF ARMENIA IN THE CONTEXT OF CHANGES IN THE FORM OF GOVERNANCE

HAKOBYAN HRANUSH

*Doctor of Law, Full Professor,
Lecturer at GSU and the Public Administration
Academy of the Republic of Armenia
e-mail: hranush.hranti@gmail.com*

The article is devoted to the constitutional status of state power institutions in the Republic of Armenia in the context of changes in the form of governance. The author notes that issues related to the form of governance, the division of state power branches, checks and balances between them, the ratio of powers and the mechanisms of mutual control among Government bodies have always been subject of scientific study. By analyzing all three forms of governance, the conclusion is drawn that a change in the system of governance has a significant impact on the relationship between the Parliament, the Government and the President, as well as the powers, and the structural mechanisms of state institutions. It also influences the development of parliamentary culture, the progression of parliamentarism, and the relationship between the majority and minority within the parliament.

Keywords: *form of governance, state power institutions, constitutional status, mechanisms of checks and balances.*

КОНСТИТУЦИОННЫЙ СТАТУС ОРГАНОВ ГОСУДАРСТВЕННОЙ ВЛАСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ В КОНТЕКСТЕ ИЗМЕНЕНИЯ ФОРМЫ ПРАВЛЕНИЯ

АКОБЯН ГРАНУШ

*Доктор юридических наук, профессор
Преподаватель ГГУ и Академии государственного управления РА
электронная почта: hranush.hranti@gmail.com*

Статья посвящена конституционному статусу институтов государственной власти Республики Армения в контексте изменения формы правления. Автор отмечает, что вопросы формы государственного управления, разделения ветвей государственной власти, сдержек и противовесов между ними, соотношения полномочий органов государственной власти и обеспечения взаимного контроля всегда были предметом научного изучения. Анализируя все три формы правления, делается вывод, что изменение формы правления оказывает существенное влияние на взаимоотношения Парламента, Правительства, Президента, полномочий и структуры государственных институтов. Это также влияет на парламентскую культуру, процесс развития парламентаризма, отношения между большинством и меньшинством в парламенте.

Ключевые слова: форма правления, институт государственной власти, конституционный статус, структуры сдержек и противовесов.

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 27.02.2025թ.:

Հոդվածը գրախոսվել է 12.03.2025թ.:

Ընդունվել է տպագրության 25.04.2025թ.: